«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատի ակադեմիայի
հիմնադիր-տնօրեն Սմբատ Լպուտյան

1 հուլիսի, 2020թ.

«Ստեփան Ավագյանի հուշամրցաշար»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի շախմատի ակադեմիան 2020թ. հուլիսի 7-ից 15-ը անցկացնում է «Ստեփան Ավագյանի հուշամրցաշար»: Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով՝ 10 մասնակիցներով, 9 խաղափուլով:
Այն ՖԻԴԵ-ի 10-րդ կարգի մրցաշար է, որն անցկացվում է ՖԻԴԵ-ի կանոնների համաձայն:
Ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 15 րոպե՝ մինչև պարտիայի ավարտը՝ 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մրցանակային ֆոնդը կազմում է 3000 ամերիկյան դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1-ին մրցանակ - $1200
2-րդ մրցանակ - $800
3-րդ մրցանակ - $600
4-րդ մրցանակ - $400

Հավասար միավորներ հավաքելու դեպքում, դրամական մրցանակները բաշխվում են հավասարաչափ, իսկ տեղերը որոշվում են ըստ՝

1. Զոնեբորն-Բերգերի գործակցի,
2. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Ժամանակացույց.

7 հուլիսի – 1-ին տուր	11:00
8 հուլիսի – 2-րդ տուր	11:00
9 հուլիսի – 3-րդ տուր	11:00
10 հուլիսի – 4-րդ տուր	11:00
11 հուլիսի – 5-րդ տուր	11:00
12 հուլիսի – 6-րդ տուր	11:00
13 հուլիսի – 7-րդ տուր	11:00
14 հուլիսի – 8-րդ տուր	11:00
15 հուլիսի – 9-րդ տուր	11:00
15 հուլիսի – Փակման արարողություն	17:00
15 հուլիսի – Մեկնման օր	

Մրցաշարի անցկացման վայրը՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, Ջերմուկ քաղաքի Ջերմուկ աշխարհի առողջարանային համալիր: